Կարգապահական գործ թիվ ԿԳ-25062

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ՖԵԼԻՔՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ԿԱՐՈՅԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Գայանե Մխիթարյանի, փաստաբաններ՝ Տիգրան Ֆելիքսի Գրիգորյանի և Կարեն Կարոյի Արսենյանի,

քննության առնելով փաստաբաններ Տիգրան Ֆելիքսի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 2590) և Կարեն Կարոյի Արսենյանի (արտոնագիր՝ թիվ 3652) **(այսուհետև նաև՝ Փաստաբաններ կամ Պատասխանողներ)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Գայանե Մխիթարյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Պալատ, դժգոհություն է հայտնել փաստաբաններ Տիգրան Գրիգորյանի և Կարեն Արսենյանի վարքագծից:

Փաստաբան Տիգրան Գրիգորյանի մասով Դիմողը նշել է, որ նա առանց զգուշացնելու բացակայել է դատաքննության ընթացքում դատական նիստից, ինչպես նաև չի ներկայացել որոշման հրապարակման օրը: Դիմողի պնդմամբ, փաստաբան Տիգրան Գրիգորյանը դատաքննության փուլում խնդրել է դատարանին հետաձգել դատական նիստը գործի նյութերին ծանոթանալու համար՝ չնայած այն փաստին, որ Դիմողը նախնական դատական նիստից երկու ամիս առաջ տրամադրել է գործում առկա բոլոր նյութերը:

Թիվ ԿԳ-25062-2-Ա
21.05.2025թ.

Դիմողը խնդրել է փաստաբան Տիգրան Գրիգորյանին տրամադրել հայցապահանջի հստակեցման դիմումի լուսապատճենը, սակայն Դիմողի խնդրանքը մնացել է անպատասխան: Դիմողը առողջական խնդիրների պատճառով չի կարողացել ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալ, իսկ փաստաբան Տիգրան Գրիգորյանը չի տրամադրել և պատասխանել է, որ դատական ակտը Գյումրի տանելու պարտավորություն չունի և Դիմողն անձամբ կարող էր ստանալ այն:

Դիմողը նշել է, որ Կարեն Արսենյանին բազմիցս տեսել է գրասենյակում:

Դիմողը հայտնել է, որ հերթական հանդիպման ժամանակ գրասենյակում տեսել է դատարանի վճիռը, ըստ որի օժանդակ շինության օրինականացնելու մասով հայցը բավարարվել էր, իսկ կից հողամասի վերաբերյալ նշում չի եղել, չնայած նրան, որ հայցադիմումում եղել է պահանջ նաև հողամասի վերաբերյալ: Փաստաբանները հայտնել են, որ դատարանի կողմից բացթողում է տեղի ունեցել և անհրաժեշտ է միջնորդություն ներկայացնել: Ներկայացված միջնորդության վերաբերյալ դատարանի պատասխանը Դիմողը ստացել է 27.01.2025թ. «WhatsApp» հավելվածի միջոցով:

Դիմողը նշել է, որ 17.01.2025թ. ստացել է Կարեն Արսենյանից ծանուցում-պահանջ գումարների վճարման վերաբերյալ, սակայն այդ պահի դրությամբ դեռ դատարանի պարզաբանումը միջնորդության վերաբերյալ Դիմողը չէր ստացել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանների նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին ներկայացվել է 09.04.2025 թվականին կազմված պահանջ **(այսուհետև՝ Պահանջ)** գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը պահանջը ստացել է 10.04.2025 թվականին և սահմանված ժամկետում ներկայացրել է բացատրություն, որով նշել է, որ Փաստաբաններն իրեն գրավոր կամ բանավոր չեն տեղեկացրել թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործով դատարան ներկայացված միջնորդության հստակեցման մասին:

Դիմողը նշել է, որ 08.05.2024թ. նիստին ինքը ներկա չի եղել: Նիստից հետո հեռախոսազանգով փաստաբան Տիգրան Գրիգորյանից է իմացել, որ նիստը հետաձգվել է, որպեսզի վերջինս ներկայացնի դիրքորոշում փաստաբանական ծախսերի հատուցման վերաբերյալ, ինչը Դիմողը խնդրել էր նրանից, քանի որ հայցը ներկայացնելու ժամանակ փաստաբան չի ունեցել և նշված դիրքորոշումը ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայել է: Դիմողը հայտնել է, որ 23.08.2024թ. դատական նիստին ինքը ներկա չի եղել, փաստաբան Տիգրան Գրիգորյանը ո՛չ գրավոր, ո՛չ էլ բանավոր Դիմողին չի ներկայացրել հստակեցման բովանդակությունը: 13.09.2024թ. դատական նիստից առաջ Փաստաբան Տիգրան Գրիգորյանը Դիմողին հավաստիացրել է, որ միջնորդությամբ ներկայացրել է դատական ծախսերը և դատական նիստի ժամանակ հայտարարել է, որ կարիք չի տեսնում ընթերցել հստակեցման միջնորդությունը:

Ստանալով վճիռը և տեսնելով, որ վճռում չկա որևէ հիշատակում կից հողամասի մասին, Դիմողը գնացել է փաստաբանական գրասենյակ և հանդիպել է Փաստաբաններին:

Փաստաբանները հավաստիացրել են, որ տեղի է ունեցել վրիպակ և փաստաբան Տիգրան Գրիգորյանը միջնորդություն կներկայացնի վրիպակն ուղղելու վերաբերյալ:

Դիմողը նշել է, որ փաստաբանական գրասենյակի հետ պայմանագիր կնքելուց ի վեր որևէ գրավոր դիմում, միջնորդություն, հստակեցում չի ստացել Փաստաբաններից: Ստացել է միայն ծանուցում-պահանջ հոնորարի մյուս մասը վճարելու վերաբերյալ, ինչպես նաև փաստաբան Տիգրան Գրիգորյանից ստացել է Դատարանի «Դատական ակտում թույլ տված վրիպակն ուղղելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը, որը Դիմողի ամուսնու մահվան վկայականի հետ միասին կցել է իր պահանջի պատասխանին:

Դիմողը Հանձնաժողովի նիստի ընթացքում ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբաններին ներկայացվել է 09.04.2025 թվականին կազմված պահանջ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Ի պատասխան պահանջի Փաստաբանները ներկայացրել են նույնաբովանդակ պատասխան գրություններ, նույնաբովանդակ ապացույցներով, հետևյալ բովանդակությամբ.

Դիմողը դիմել է փաստաբանական գրասենյակ՝ հայտնելով, որ *ՀՀ վարչական դատարանում է քննվում թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործը՝ ք. Գյումրի, Ղանդիլյան փողոցի թիվ 4/2 բնակելի տան կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը և կից հողամասը ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը բարենպաստ վարչական ակտը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին և ներկայացվել է դատարանում առկա գործի նյութերը:*

Գործի նյութերին ծանոթանալուց հետո Դիմողի հետ կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր և վերջինս Փաստաբաններին 09.02.2024թ. տվել է լիազորագիր իր շահերը դատարանում ներկայացնելու նպատակով:

Փաստաբան Տիգրան Գրիգորյանը գործը ստանձնելուց հետո 25.04.2024թ. մասնակցել է գործի քննությանը դատարանում: Դատարանը Փաստաբան Տիգրան Գրիգորյանին առաջարկել է հստակեցնել, թե կոնկրետ ո՞ր դիմումով հարուցված վարչական վարույթի հիման վրա է Հայցվորը վարչական մարմնից պահանջել ստանալ հայցվող բարենպաստ վարչական ակտի տրամադրումը, որը վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել, քանի որ ներկայացվել են մի շարք դիմումներ: Նշված հարցին անդրադարձ կատարելու և ներկայացված հայցի հստակեցում կատարելու նպատակով դատական նիստը հետաձգվել է և նշանակվել այլ հերթի:

Դիմողը ք. Գյումրի Ղանդիլյան 4/2 հասցեում գտնվող ինքնակամ կառույցի օրինականացման համար վարչական մարմին ներկայացրել է հետևյալ դիմումները.

1. 29.01.2021թ. Դիմողը դիմումն է Գյումրու համայնքապետարան ներկայացրել հետևյալ բովանդակությամբ. «ք. Գյումրի Ղանդիլյան 4/2 տուն հասցեն մեր սեփական տունն է այդ հասցեում ունենք ապօրինի կառույց: Խնդրում եմ թույլատրեք օրինականացման որպես մեր սեփականություն: Կից նաև օժանդակ շինությունը իր հողամասով»: Նշված դիմումին վարչական մարմինը որևէ պատասխան չի տրամադրել:

2. 09.02.2022թ. Դիմողը Գյումրու համայնքապետարան է ներկայացրել դիմում, որով հայտնել է իր բողոքը 29.01.2021թ. դիմումի կապակցությամբ վարչական մարմնի կողմից դրսևորած անգործության դեմ, որը ըստ էության ուղղված չէ վարչական ակտի ընդունմանը: Նշված գրությանը 10.03.2022թ. պատասխանել են, որ դիմումում նշված շինությունները գնվում են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա և օրինականացման ենթակա չեն:

3. Վարչական մարմնի կողմից 10.03.2022թ. ուղարկված 02//2338 գրությանը ի պատասխան Դիմողը 15.03.2022թ. դիմում է ներկայացրել վարչական մարմին և խնդրել իրեն տրամադրել քաղաքային քարտեզի այն հատվածը որտեղ գտնվում է իր տունը և խնդրել վերանայել ուղարկված գրությունը: Կից ներկայացնելով չափագրության փաստաթղթեր: Նշված դիմումը ևս ուղղված չի եղել վարչական ակտի ընդունմանը: Նշված դիմումին պատասխանել են համայնքապետարանից 23.03.2022թ.՝ 02//4129 գրությամբ և տրամադրել հատված Գյումրու գլխավոր հատակագծից:

4. Այնուհետև՝ 23.03.2022թ. Դիմողը կրկին դիմում է ներկայացրել վարչական մարմին և խնդրել օրինականացնել իր շինության անօրինական հատվածները և ազատ հողամասը, իսկ «ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա գտնվող տարածքը տալ վարձակալության հիմունքներով»: Նշված դիմումը ևս հայցի առարկայի հստակեցման նպատակով չէր կարող հանդիսանալ վարչական ակտի տրամադրման նպատակով դիմումով հարուցված վարչական վարույթի համար դիմում, որով կարող էր ներկայացվել պահանջ վարչական ակտը ընդունված համարելու խնդրանքով, քանի որ ըստ ՀՀ կառավարության 18.05.2006թ. որոշման 2-րդ կետի բ) ենթակետի օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա (...):

Այսպիսով, եթե դատարան ներկայացվեր միջնորդություն, որ հայցի առարկայի հստակեցումը կատարվի այնպես, որ վարչական ակտի տրամադրման համար հիմք ընդունվեր Դիմողի 23.03.2022թ. ներկայացված դիմումը, ապա հայցը կարող էր մերժվել այն հիմքով, որ չեն կարող օրինական ճանաչվել այն կառույցները որոնք կառուցվել են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա:

5. 22.09.2022թ. Դիմողը կրկին դիմում է ներկայացրել վարչական մարմին և ըստ էության բովանդակային առումով բողոքել վարչական մարմնի դրսևորած անգործության դեմ (նշված դիմումը մյուս դիմումների հետ կից ներկայացվում է):

6. 04.04.2023թ. Դիմողը կրկին դիմում է ներկայացրել, որով խնդրել է պարզաբանել քաղաքապետարանի և կադաստրի կոմիտեի որոշումների միջև հակասություն առաջանալու դեպքում, որ որոշումն է ճանաչվում առոչինչ, և որով պետք է առաջնորդվի քաղաքացին: Նշված դիմումը ևս չէր կարող հիմք հանդիսանալ վարչական վարույթի հարուցման և

ակնկալվող վարչական ակտի ընդունման համար, քանի որ դիմումով որևէ պահանջ վարչական մարմնին չի ներկայացվում, որը ուղղված կլիներ ինքնակամ կառույցների և հողամասի օրինականացմանը:

7. 11.07.2023թ. Դիմողը կրկին դիմում է ներկայացրել վարչական մարմին և հայտնել իր դժգոհությունը, առ այն, որ 29 ամիս է, սկսած՝ 2021 թվականի փետրվար ամսից իր հարցին չեն տրամադրում պատասխան և խնդրել գրավոր պատասխանել իր դիմումի ճակատագրի մասին: Նշված դիմումը ևս ուղղված չի եղել վարչական ակտի ընդունմանը և հիմք չի կարող հանդիսանալ վարչական վարույթի հարուցման համար, իսկ 11.07.2023թ. ներկայացված դիմումին Գյումրու համայնքապետարանից 14.07.2023թ. 02//13459 գրությամբ տրամադրվել է պատասխան և հայտնել են, որ 2021 փետրվար ամսից ներկայացված դիմումին տրվել է 02/02.3/12843-21 պատասխանը:

8. Վերջին դիմումը ուղղված վարչական մարմնին եղել է 31.10.2023թ., որով Դիմողը պահանջել է համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի իրեն տրամադրել համապատասխան վարչական ակտը ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին և դիմել դատարան 30.11.2023թ.:

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48 րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ու ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8200/05/19 վարչական գործով արտահայտած իրավական դիրքորոշմամբ և վստահորդի լավագույն շահերով, փաստաբան Տիգրան Գրիգորյանը 08.05.2024 թվականին դիմում է ներկայացվել գործը քննող ՀՀ վարչական դատարան թիվ ԳԴ5/0513/05/23 վարչական գործով հայցի առարկան հստակեցնելու մասին, որը նախապես գրասենյակում Փաստաբանները քննարկել են Դիմողի հետ, Դիմողին հայտնի է եղել, որ նախապես կայացած նիստը հետաձգվել է հայցի առարկան հստակեցնելու նպատակով: Դիմողի հետ քննարկվել է հայցի առարկան հստակեցնելու դիմումը, քննարկվել է՝ նրա կողմից վարչական վարույթի ընթացքում ներկայացված դիմումները, (քանի որ վարչական վարույթի ընթացքում և հայցադիմում դատարան ներկայացնելու ժամանակ դիմողի գործը գրասենյակը ստանձնած չի եղել) դրանք ներկայացնելու ժամանակահատվածները, վարչական մարմնի կողմից տրված պատասխանները և այլն և որևէ գործողություն, որը կարող էր հակասեր վստահորդի շահերին չի կատարվել և հայցադիմումը հայցի առարկան հստակեցնելու պահանջը համաձայնեցվել է Դիմողի հետ: Ավելին, փաստաբան Տիգրան Գրիգորյանը և գրասենյակի աշխատակազմը պատշաճ ջանասիրությամբ ներկայացրել են վստահորդի շահերը, ինչի արդյունքում էլ հայցը բավարարվել է:

Ինչ վերաբերում է 29.01.2021թ. ներկայացված դիմումին, ապա միայն այդ դիմումն է բավարարել Վճռաբեկ դատարանի կողմից վերը հիշատակված թիվ ՎԴ/8200/05/19 վարչական գործով կայացրած որոշմամբ շարադրված պայմաններին: Մյուս դիմումները կամ չէին համապատասխանում որոշմամբ շարադրված պահանջներին կամ արդեն իսկ պատասխանվել էին վարչական մարմնի կողմից, իսկ պատասխանի առկայության պայմաններում, որով իսկ խոսք է գնում վարչական ակտի ընդունման մերժման մասին, չեր կարող խոսք գնալ գործողության կատարման հայցի մասին, այլ կարող էր ներկայացվել պարտավորեցման հայց և քանի որ արդեն բաց է թողնված եղել պարտավորեցման հայց

ներկայացնելու երկամսյա ժամկետները, նման պահանջ չի ներկայացվել, իսկ հայց ներկայացնելու բաց թողնված ժամկետների վերականգման միջնորդություն ներկայացնելու հիմքերը բացակայել է:

Հնարավոր պարտությունից խուսափելու նպատակով էլ ներկայացվել է հենց 29.01.2021թ. ներկայացված դիմումով խնդրարկվող վարչական ակտը փրամադրելուն պարտավորեցնելու պահանջ, ինչը նախկինում ներկայացված չի եղել հենց հայցվորի կողմից: Իսկ ինչը վերաբերում է հայցի առարկայից հողամասի օրինականացման պահանջը հանելուն հայտել են հետևյալը.

Դիմողը վարչական մարմնին ներկայացված որևէ դիմումով առանձին հողամասի օրինականացման կամ առանձին հողամասի և շինության օրինականացման պահանջ չի ներկայացրել վարչական մարմնին և չէր էլ կարող, քանի որ ՀՀ Կառավարության 912–Ն որոշումը ոչ թե վերաբերում է հողամասերը օրինականացնելուն այլ ինքնակամ կառույցները, որի շրջանակներում փրամադրվում է ինքնակամ կառույցով զբաղեցված, ինչպես նաև դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամաս և միայն 29.01.2021թ. դիմումն է (այն դիմումն է, որով հստակեցվել է հայցի առարկան) եղել պատշաճ, որով Դիմողը խնդրել է «թույլատրեք օրինականացման որպես մեր սեփականություն: Կից նաև օժանդակ շինությունը իր հողամասով»: Այսինքն դիմումը վերաբերել է ինքնակամ կառույցի օրինականացմանը, ինչը բխում է ՀՀ Կառավարության 912-Ն որոշումից և թույլատրելի է:

Դատարանը բավարարելով թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործով ներկայացված հայցադիմումը որոշել է պարտավորեցնել Գյումրու համայնքապետարանին Գայանե Մխիթարյանին փրամադրել ՀՀ ք. Գյումրի, Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից փարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912–Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը: Վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ և վճռի կատարման փուլում համայնքապետարանը պարտավոր է փրամադրել ինքնակամ կառույցով զբաղեցված և ավել հողամաս դիմողին, քանի որ ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման համաձայն ինքնակամ կառույցն օրինականացնելիս դրա սպասարկման և պահպանման համար փրամադրվում են ավել հողամասեր ներառյալ ինքնակամ կառույցով զբաղեցված հողամասը,

Ըստ էության Դիմողի փաստարկներն առ այն, որ իրեն հողամաս չի փրամադրվելու և մեր կողմից կատարվել է որևէ գործողություն իր շահերին հակասող առարկայազուրկ է, վերջինիս փրամադրվելու է այնքան հողամաս որքան սահմանված է ՀՀ Կառավարության հիշյալ որոշմամբ սահմանված կարգով, իսկ դատական ակտը վերաբերում է դիմումով հայցվող վարչական ակտի փրամադրմանը, ինչն էլ բավարարվել է և բավարարվել է այն ինչը Դիմողը գրավոր հայցել է վարչական մարմնից:

Բացի այդ, չի կարող որևէ մեկի ինքնակամ կառույցը օրինականացվել առանց դրանով զբաղեցված հողամասի, քանի որ շինությունը ամրացված է հողամասին, իսկ կից հողամասը փրամադրվում է դրա օգտագործման և սպասարկման համար և փաստաբանը չի կարող խնդրել դատարանին կայացնել մի որոշում, ինչը դուրս է հայցի և օրենսդրական կարգավորման շրջանակից, իսկ ներկայացված միջնորդությունը ամբողջությամբ բխել է

դիմողի շահերից և գործում առկա նյութերի պայմաններում որևէ այլ միջնորդություն չէր էլ կարող Դատարան ներկայացվել:

Ամփոփելով վերոգրյալը նշել են, որ Փաստաբանների գործողություններում առկա չէ Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտում:

Փաստաբանները Հանձնաժողովի նիստի ընթացքում պնդել են նախկինում ներկայացված իրենց դիրքորոշումը՝ հավելելով, որ ՎԴ5/0413/05/23 վարչական գործով նախկինում մերժվել է Գայանե Մխիթարյանի կողմից ներկայացված հայցը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 03.03.2025թ. թիվ 108-Ա/ԿԳ-25062 որոշմամբ փաստաբաններ Տիգրան Գրիգորյանի և Կարեն Արսենյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 3.5.3-րդ ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

10.03.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 08.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-8 կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 08.05.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 21.05.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 29.01.2021 թվականին Գայանե Մխիթարյանը դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով օրինականացնել ՀՀ, Գյումրի ք., Զեյտունի 4/2 տուն

հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը, որի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, սակայն չի կայացվել որևէ որոշում: *Սույն փաստը հաստատվում է 29.01.2021 թվականին դիմումի պատճենով և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

2. 31.10.2023 թվականին Գայանե Մխիթարյանը դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով տարամադրել օրենքի ուժով ընդունված ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը օրինական ճանաչելու վերաբերյալ ֆիկտիվ վարչական ակտը: *Սույն փաստը հաստատվում է 31.10.2023 թվականին դիմումի պատճենով:*

3. 30.11.2023թ. Դիմող Գայանե Մխիթարյանը ՀՀ վարչական դատարան հասցեագրվել է հայցադիմում ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը և կից հողամասը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթուղթը օրինականացնելու վերաբերյալ՝ բարենպաստ վարչական ակտ տրամատրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը ստացել է ՎԴ5/0513/05/23 համարը և ընդունվել է վարույթ: *Սույն փաստը հաստատվում է թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ, Դիմողին և Փաստաբաններին ուղղված պահանջներին ի պատասխան գրություններով և բացատրություններով:*

4. ՎԴ5/0513/06/23 վարչական գործով՝ Գայանե Առաքելյանի կողմից ի սկզբանե ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունների կատարման հայց:

5. 09.02.2024թ. Դիմողի և «Լեգալ Սի» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն՝ Կարեն Արսենյանի միջև կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետև նաև՝ Պայմանագիր)**: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Լեգալ Սի» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

6. Պայմանագրի 1.2.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը իրավաբանական աջակցություն է տրամադրում և ներկայացնում պատվիրատուի շահերը ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործի շրջանակներում: Կատարողը ՀՀ վարչական դատարան է ներկայացնում դիմումներ, բողոքներ, միջնորդություններ, մասնակցում դատական նիստերին: Կատարողը ներկայացնում է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքի պատասխաններ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Լեգալ Սի» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

7. 25.04.2024 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում Դատարանը գտել է, որ առկա է հայցապահանջի հստակեցման անհրաժեշտություն և առաջարկել է հայցվորին հստակեցնել հայցի առարկան և նշել, **թե վարչական մարմնին ներկայացված դիմումներից որի՞ հիման վրա է ըստ հայցվորի ընդունված համարվել ֆիկտիվ վարչական ակտը** և հայցվորը ո՞ր դիմումով է հայցել տրամադրել ֆիկտիվ վարչական ակտը: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանների բացատրություններով, հայցի առարկան հստակեցնելու դիմումի պատճենով և թիվ ՎԴ5/0513/06/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա*

տեղեկատվությամբ:

8. Հայցվորի ներկայացուցչի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել դիմում՝ հայցի առարկան հստակեցնելու մասին, որի համաձայն՝ հայցվոր կողմը հստակեցրել է հայցի առարկան՝ այն ձևակերպելով հետևյալ կերպ. «Պարտավորեցնել պատասխանող Գյումրու քաղաքապետարանին տրամադրել 29.01.2021 թվականի թիվ 1556 դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի վերաբերյալ օրենսգրքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ բարենպաստ վարչական ակտը:»: Նշված ձևակերպումից հետևում է, որ հայցվոր կողմը խնդրարկվող բարենպաստ վարչական ակտ կայացնելու խնդրանքով դիմել է 29.01.2021 թվականի դիմումով: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանների բացատրություններով, հայցի առարկան հստակեցնելու դիմումի պատճենով և թիվ ՎԴ5/0513/06/23 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարեն Արսենյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2024 թվականից, և 2024-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանների նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն բացակայում են, ապա փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման***:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը արձանագրում է, որ Փաստաբանները Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո փաստացի իրականացրել է որոշակի գործողություններ տրված հանձնարարության կատարման ապահովման ուղղությամբ, որի ավարտից հետո առաջացել է Դիմողի դժգոհությունը Փաստաբանների կատարած գործողություններից: Մասնավորապես, Դիմողը Փաստաբաններին վերագրել է իրեն շահերին հակասող գործողություն կատարելու վարքագիծ:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների*

պալատի կանոնադրության պահանջները, չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը.

Կանոնագիրքի 3.5.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:*

Վերոգրյալից հետևում է, որ Օրենքով և Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և վստահորդի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար գործելու պարտականությունը:

Ընդ որում, բացի վստահորդի շահերից և նրա օգտին գործելու պարտականությունից, փաստաբանը նաև առանց իր վստահորդի հետ համաձայնեցնելու իրավունք չունի ընդունել դիրքորոշում, որը կարող է որևէ կերպ, բացասական անդրադառնալ վստահորդի իրավունքների և օրինական շահերի վրա:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին.

• **Արդյո՞ք փաստաբաններ Տիգրան Ֆելիքսի Գրիգորյանը և Կարեն Կարոյի Արսենյանը կատարել են Դիմողի շահերին հակասող որևէ գործողություն:**

«Ինքնակամ կառույց» հասկացության դեֆինիցիան, դրա իրավական կարգավիճակը սահմանված, ինչպես նաև նրա նկատմամբ սեփականություն ճանաչելու, օրինականացման կամ քանդման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով: Այսպես, նշյալ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 1-2-րդ կետերի համաձայն՝

«1. Հաստատել ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

գ) օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:»:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ, նախ, ինքնակամ կառույցի վերաբերյալ իրավահարաբերություններն օրենսդիրը կանոնակարգել է քաղաքացիաիրավական իրավահարաբերությունները կարգավորող հիմնական իրավունքի աղբյուրով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Այսպես, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը փաստացի («de facto») դիտարկվում է ինքնակամ կառույց:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *վարչարարությունը՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ *վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ: Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից: (...):*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ* ***ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված,*** *և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե դիմումով հայցվում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքները անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը տրամադրելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով **ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը դիմող անձին է տրամադրվում կամ վերջինիս դիմումի հիման վրա, կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:** Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը դիմող անձին է տրամադրվում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:*

Սույն կարգապահական գործի նյութերից հետևում է, որ Գայանե Մխիթարյանը դեռևս 29.01.2021թ. թվականին Գյումրու համայնքապետարանին ներկայացրել է դիմում, որով խնդրել է, օրինականացնել ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը: Ըստ այդմ, Դիմողի ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու մասին ֆիկտիվ վարչական ակտն ընդունված պետք է լինի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետն ավարտվելուն պես:

31.10.2023 թվականին Գայանե Մխիթարյանը դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով տարամադրել օրենքի ուժով ընդունված ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը օրինական ճանաչելու վերաբերյալ ֆիկտիվ վարչական ակտը: Նշված դիմումին պատասխան չի տրվել:

30.11.2023թ. Դիմող Գայանե Մխիթարյանը ՀՀ վարչական դատարան հասցեագրվել է հայցադիմում *(ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունների կատարման հայց)* ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը և կից հողամասը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթուղթը օրինականացնելու վերաբերյալ՝ բարենպաստ վարչական ակտ տրամատրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը ստացել է ՎԴ5/0513/05/23 համարը և ընդունվել է վարույթ:

25.04.2024 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում Դատարանը գտել է, որ առկա է հայցապահանջի հստակեցման անհրաժեշտություն և առաջարկել է հայցվորին հստակեցնել հայցի առարկան և նշել, **թե վարչական մարմնին ներկայացված դիմումներից որի հիման վրա է ըստ հայցվորի ընդունված համարվել ֆիկտիվ վարչական ակտը** և հայցվորը որ դիմումով է հայցել տրամադրել ֆիկտիվ

վարչական ակտը:

Հայցվորի ներկայացուցչի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել դիմում՝ հայցի առարկան հստակեցնելու մասին, որի համաձայն՝ հայցվոր կողմը հստակեցրել է հայցի առարկան՝ այն ձևակերպելով հետևյալ կերպ. «Պարտավորեցնել պատասխանող Գյումրու քաղաքապետարանին տրամադրել 29.01.2021 թվականի թիվ 1556 դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի վերաբերյալ օրենսգրքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ բարենպաստ վարչական ակտը:»:

Փաստաբանների կողմից հայցի առարկան 29.01.2021 թվականի թիվ 1556 դիմումի հիման վրա չհստակեցնելու դեպքում հայցը ենթակա էր լինելու մերժման, քանի որ թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործում բացակայելու էր բարենպաստ վարչական ակտ կայացնելու խնդրանքով վարչական մարմնին դիմած լինելու, օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու և Գյումրու քաղաքապետարանին ֆիկտիվ վարչական ակտը տրամադրելու համար դիմած լինելու փաստերը:

Վերոգրյալից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված ֆիկցիայի ինստիտուտի կիրառման տեսանկյունից հայցի առարկան՝ 29.01.2021 թվականի թիվ 1556 դիմումի հիման վրա չհստակեցնելու դեպքում Փաստաբանները իրենց անգործության հետևանքով կատարելու էին Դիմողի շահերին հակասող գործողություն, այն համատեքստում, որ ՀՀ վարչական դատարանի կողմից ի պաշտոնե մատնանշվել էր հայցի առարկան հստակեցնելու իրավաչափ առաջարկ:

Նշվածից ակնհայտ է, որ դատարանը կարող էր բավարարել հայցը բացառապես ինքնակամ կառույցի մասով, քանի որ կից հողամասի օրինականացման մասին նախ դիմում չի եղել ներկայացրած վարչական մարմնին, իսկ նման պահանջ նույնիսկ ներկայացված լինելու դեպքում էլ այն չէր բխելու ո՛չ ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, ո՛չ էլ ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործի շրջանակներում, որը կապված է ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացի հետ, Փաստաբանների կողմից ձեռնարկվել են այն բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված են եղել ֆիկցիայի ինստիտուտի կիրառման միջոցով՝ Դիմողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը: Նշվածի մասին վկայում է հիշատակված գործով 04.11.2024թ. դատարանի վճիռը, որով Դիմողը հայցապահանջը ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու մասով բավարարվել է: Ուստի՝ Փաստաբաններին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների խախտման մասով բացակայում են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Անդրադառնալով Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը կից հողամասի վերաբերյալ կարգապահական նիստում բարձրացված հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել

հետևյալը.

ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: **Ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ որոշմանը կցվում է օրինական ճանաչված կառույցի (կառույցների) պահպանման և <u>սպասարկման</u> համար առանձնացված հողամասի հատակագիծը:**

Նույն որոշման 34-րդ կետի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում օրինականացման լիազոր մարմնի կողմից տվյալ կառույցը՝ սույն կարգի 35-րդ կետով սահմանված գներով, **իսկ դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասը՝ կադաստրային արժեքով ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն է արվում կառույցն իրականացրած անձին:** Առաջարկության մեջ պարտադիր նշվում են անշարժ գույքի տվյալ միավորի հասցեն, կառույցների և հողամասի մակերեսները, առաջարկության ընդունման համար սույն կարգի 36-րդ կետով նախատեսված ժամկետը, հողամասի կադաստրային արժեքը, ինչպես նաև կառույցի վաճառքի՝ սույն կարգի 35-րդ կետով սահմանված գները:

Միաժամանակ, ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով:

Վերոգրյալից հետևում է, որ համայնքի ղեկավարն ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: Ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ որոշմանը կցվում է օրինական ճանաչված կառույցի (կառույցների) **պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասի և շինությունների՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հրամանով հաստատված ձևի հատակագծերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշումից բխում է նաև, որ բացի շինությամբ ծանրաբեռնող հողամասից կարող է հատկացվել **<u>սպասարկման</u> համար առանձնացված հողամաս**:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբաններ Տիգրան Ֆելիքսի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 2590) և Կարեն Կարոյի Արսենյանի (արտոնագիր՝ թիվ 3652) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի

2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25062 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25062-2-Ա
21 մայիսի 2025թ.
ք.Երևան